ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
**ՆԱԽԱԳԱՀ**

«14» սեպտեմբերի 2022թ. № 1/1166-Ա

# ՀՐԱՄԱՆ

## ՆԱՐԵԿ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 6-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի թիվ 53/2022 եզրակացությունը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Աշխատանքային կարգապահությունը խախտելու՝ անհարգելի պատճառով պարբերաբար աշխատանքի չներկայանալու համար, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական բաժնի /կենտրոն/ մաքսային տեսուչի ժամանակավոր թափուր պաշտոն զբաղեցնող Նարեկ Սեյրանի Մանուկյանի նկատմամբ կիրառել «Աշխատանքային պայմանագրի լուծում» կարգապահական տույժը և 2022 թվականի սեպտեմբերի 15-ից ազատել աշխատանքից:
2. Ֆինանսահաշվային վարչությանը կատարել վերջնահաշվարկ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Կարինե Գրիգորյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:

Recoverable Signature

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ